ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

№ - 020/ 2907
17 սեպտեմբեր 2025թ.

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մ.Բաղրամյան 26, Հեռ.(0252)2-43-93
Կայք՝ www.aparan.am էլ.փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com

<< ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ >> ՍՊԸ-ին
ՀՎՀՀ՝ 00149653
էլ. հասցե՝4davtyan4.44@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանիորեն լուծարելու մասին

Հարգելի գործընկեր.

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ << ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ >> ՍՊԸ-ի(ՀՎՀՀ՝ 00149653,գործունեության հասցե՝ Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. 32 շենք, 45բն) և Ապարանի համայնքապետարանի միջև 12.06.2025 թվականին կնքվել է Ապարան համայնքի Ապարան քաղաքում մանկապատանեկան մարզադպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀՄԱԾՁԲ-58/25 ծածկագրով պայմանգիրը: Կնքված պայմանագրի 7.16 կետով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքման միջոցով: 05.07.2025թվականին էլեկտրոնային փոստի միջոցով **(4davtyan4.44@gmail.com)** << ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ >> ՍՊԸ-ին ծանուցվել է ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ Համաձայնագիր N1-ը և առաջարկվել տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում հաստատել համաձայնագիրը և ներկայացնել Ապարանի համայնքապետարան, սակայն մինչ 17.09.2025թվականը << ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ >> ՍՊԸ-ն չիներկայացրել ծանուցված համաձայնագիրը և չի կատարել Ապարան քաղաքում մանկապատանեկան մարզադպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ նախագծային լուծումները, ինչի հետևանքով չի ապահովվել շինարարության անխափան ընթացքը:

Ելնելով վերոգրյալից Պատասխանատու ստորաբաժանումը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի(«եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում») և N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀՄԱԾՁԲ-58/25 ծածկագրով պայմանգրի 7.16 կետի(«Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում») պահանջները առաջարկում է Պատվիրատուի ղեկավարին միակողմանիորեն լուծարել Ապարանի համայնքապետարանի և << ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ >> ՍՊԸ-ի միջև 12.06.2025 թվականին կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀՄԱԾՁԲ-58/25 ծածկագրով պայմանգիրը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա) ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջները, Պատվիրատուն 17.09.2025թվականից միակողմանիորեն լուծարում է Ապարանի համայնքապետարանի և << ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ >> ՍՊԸ-ի միջև 12.06.2025 թվականին կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀՄԱԾՁԲ-58/25 ծածկագրով պայմանգիրը:

Միաժամանակ հայտնում եմ, որ համաձայն պայմանագրի 7.11 կետի « Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատա¬րելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:»

Առդիր մեկ զիպ ֆայլ

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավարի Ժ/պ՝ **Ա.Գ. Կարապետյան**

Կատարող՝ Ապարանի համայնքապետարանի գնումների գլխավոր մասնագետ Հ.Հովսեփյան
բջջ. +37494231893